

SS սկսնակ ընկերությունների համար նախատեսված հարկային արտոնություններ

1.1 Ընդհանուր նկարագիր

«Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» ՀՀ օրենքի շրջանակներում SS ոլորտում գործող հավաստագրված ընկերություններին կարող են տրվել մի շարք հարկային արտոնություններ, եթե վերջիններս զբաղվում են օրենքով սահմանված գործունեությամբ և համապատասխանում են մի շարք պահանջների:

Հավաստագրման համար կարող են դիմել հետևյալ տնտեսավարող սուբյեկտները.

- 1) ՀՀ պետական գրանցում ստացած առևտրային կազմակերպությունները
- 2) ՀՀ հաշվառված անհատ ձեռնարկատերերը

Պետական աջակցության ենթակա գործունեության տեսակներն են¹

ա. ծրագրային ապահովման մշակում,

բ. փորհրդատվական գործունեություն համակարգչային տեխնոլոգիաների բնագավառում, դ. տվյալների մշակում, ցանցում տեղեկատվության տեղաբաշխում և հարակից գործունեություն,

ե. վեբ-պորտալների հետ կապված գործողություններ,

զ. տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում կրթական, հետազոտական ծրագրերի իրականացում

է. էլեկտրոնային համակարգերի նախագծում, թեստավորում և արտադրություն, համակարգչային անիմացիա և մոդելավորում, ինչպես նաև ինտեգրալային սխեմաների նախագծում և թեստավորում:

Հավաստագրման համար դիմող տնտեսավարող սուբյեկտները պետք է բավարարեն հետևյալ պահանջներին.

¹ <http://www.arlis.am/DocumentView.aspx?docID=95017>

- 1) ստեղծվել են վերոհիշյալ գործունեության տեսակների ներքո գործունեություն իրականացնելու նպատակով
- 2) չեն ստեղծվել այլ տնտեսավարող սուբյեկտի վերակազմակերպման արդյունքում
- 3) աշխատողների թիվը չի գերազանցում 30-ը
- 4) բաժնետերերից որևէ մեկը չի հանդիսացել SS ոլորտի լուծարված ընկերության բաժնետեր կամ գործունեությունը դադարեցրած անհատ ձեռնարկատեր
- 5) բաժնետերերից որևէ մեկը չի հանդիսանում հավաստագրված այլ SS ընկերության բաժնետեր կամ անհատ ձեռնարկատեր
- 6) բաժնետերերից որևէ մեկը կամ հավաստագրման համար դիմած անհատ ձեռնարկատերը չի հանդիսանում սնանկության գործընթացում գտնվող այլ տնտեսավարող սուբյեկտի բաժնետեր
- 7) բաժնետերերից որևէ մեկը նախորդ 3 տարվա ընթացքում չի հանդիսացել SS ոլորտում գործունեություն իրականացրած այլ կազմակերպություն կամ անհատ ձեռնարկատեր կամ SS ոլորտում գործունեություն իրականացրած այլ կազմակերպության բաժնետեր
- 8) հավաստագրման համար չի կարող դիմել այն անհատ ձեռնարկատերը, որը նախորդ 3 տարվա ընթացքում հանդիսացել է SS ոլորտում գործունեություն իրականացրած և գործունեությունը դադարեցրած անհատ ձեռնարկատեր.
- 9) հավաստագրման համար չեն կարող դիմել այն կազմակերպությունները, որոնց բաժնետերերի >20% բաժնեմասը պատկանում է այլ կազմակերպությանը կամ որոնց բաժնետերերից որևէ մեկին պատկանում է այլ կազմակերպության >20% բաժնեմասը:
- 10) չեն կարող SS ոլորտում գործունեություն իրականացնող ՀՀ ռեզիդենտ հանդիսացող այլ տնտեսավարող սուբյեկտներին օտարել վերը նշված գործունեության արդյունքները, բացառությամբ կրթական ծրագրերի իրականացման դեպքերի:

1.2 Հարկային պարտավորություններ

Հավաստագրված SS ընկերությունները կամ անհատ ձեռնարկատերերը ազատվում են ՀՀ բյուջե վճարման ենթակա պետական հարկերից: Ավելի մանրամասն հարկերի և վճարների աղյուսակը բերված է ստորև:

| | Ավելացված արժեքի հարկ | Շահույթահարկ | Եկամտային հարկ ² | Շրջանառության հարկ |
|-------------|--------------------------------------|--------------|--|--|
| ՍՊԸ/ՓԲԸ/ԲԲԸ | Վճարում է ընդհանուր հիմունքներով 20% | Ազատված է | 5% շահաբաժնի հարկումն ռեզիդենտի դեպքում ³ : Ի հավելումն, վարձու աշխատող ունենալու դեպքում յուրաքանչյուր վարձու աշխատողի աշխատավարձի 10% չափով: | Շրջանառության հարկ վճարող լինելու դեպքում վճարվում է համապատասխան հիմունքներով |
| ԱԶ | Վճարում է ընդհանուր հիմունքներով 20% | Ազատված է | Վարձու աշխատող (այդ թվում անհատական ձեռնարկատերն անձամբ, եթե վերջինս գրանցված աշխատող է և ստանում է աշխատավարձ) ունենալու դեպքում՝ յուրաքանչյուր վարձու աշխատողի եկամտի 10% չափով: | Շրջանառության հարկ վճարող լինելու դեպքում վճարվում է համապատասխան հիմունքներով |

| | Սոցիալական/կուտակային վճար | Դրոշմանիշային վճար/բանակ |
|-------------|--|---|
| ՍՊԸ/ՓԲԸ/ԲԲԸ | Վարձու աշխատողի ⁴ < 500.000 դրամ աշխատավարձի դեպքում՝ ամսական 4.5% 500.000-1.020.000 դրամ աշխատավարձի դեպքում՝ ամսական 10%-ի ու 32.500 դրամի տարբերություն, >1.020.000 դրամ աշխատավարձի դեպքում՝ 69.500 դրամ | Ամեն վարձու աշխատողի համար կախված աշխատավարձից ամսական՝ <100.000 դրամ աշխատավարձի դեպքում՝ 1500 դրամ, 100.001-200.000 դրամ աշխատավարձի դեպքում՝ 3000 դրամ 200.001-500.000 դրամ աշխատավարձի դեպքում՝ 5500 դրամ 500.001-1.000.000 դրամ աշխատավարձի դեպքում՝ 8500 դրամ >1.000.001 դրամ աշխատավարձի դեպքում՝ 15.000 դրամ |

² Եկամտային հարկը վերաբերում է ոչ թե բիզնեսին, այլ այդ բիզնեսում ներգրավված աշխատողներին: Տնտեսվարողը, որպես հարկային գործակալ, պարտավոր է հաշվարկել և վճարել իր աշխատողների եկամտային հարկը:

³ Ենթադրենք ՍՊԸ բաժնեմասերը պատկանում են ձեզ և ձեր ընկերոջը՝ 60% և 40% հարաբերակցությամբ: Ամսվա կտրվածքով Ձեր շահույթը կազմել է 50.000 դրամ: Որպես հավաստագրված ՏՏ ընկերություն դուք ազատված եք շահույթահարկից: Սակայն, ըստ ձեր ունեցած շահաբաժնի, շահույթի 30.000 դրամ ձեզ է բաշխվում, 20.000 դրամ ձեր ընկերոջը: 5% շահաբաժնի հարկումը վերաբերում է հենց այս գումարներին: Որպես հարկային գործակալ, ձեզ անհրաժեշտ կլինի պետական բյուջե վճարել 1500 դրամ (30.000 դրամ շահաբաժնի 5%-ը), ձեր կնոջը՝ 1000 դրամ (20.000 դրամ շահաբաժնի 5%-ը)

⁴ Եթե ծնվել է 1974 թվականի հունվարի 1-ից հետո: Միչև 1974 թ. հունվարի 1-ը ծնված լինելու դեպքում որևէ կուտակային վճար չի կատարվում:

| | | |
|-----------|---|--|
| <p>ԱԶ</p> | <p>SS ոլորտում հավաստագրված ԱԶ-ն իր գծով⁴ վճարում է ամսական 5000 դրամ կուտակային վճար:</p> <p>Վարձու աշխատող⁴ ունենալու դեպքում աշխատողի հաշվով`</p> <p>< 500.000 դրամ աշխատվարձի դեպքում` ամսական աշխատավարձի 3.5%</p> <p>500.000-1.020.000 դրամ աշխատավարձի 10%-ի ու 32.500 դրամի տարբերություն, >1.020.000 դրամ աշխատավարձի դեպքում` 69.500 դրամ</p> | <p>SS ոլորտում հավաստագրված ԱԶ-ն իր գծով վճարում է տարեկան 18.000 դրամ միանվագ: Վարձու աշխատող ունենալու դեպքում, ամեն վարձու աշխատողի համար կախված աշխատավարձից ամսական`</p> <p><100.000 դրամ աշխատվարձի դեպքում` 1500 դրամ, 100.001-200.000 դրամ աշխատվարձի դեպքում` 3000 դրամ 200.001-500.000 դրամ աշխատավարձի դեպքում` 5500 դրամ 500.001-1.000.000 դրամ աշխատվարձի դեպքում` 8500 դրամ >1.000.001 դրամ աշխատավարձի դեպքում` 15.000 դրամ</p> |
|-----------|---|--|

1.3 Հարկային ռեժիմի տակ աշխատելու համար դիմումի ներկայացման կարգ

Հավաստագիր ստանալու համար SS ընկերությունը կամ ԱԶն գրանցման պահից 3 ամսվա ընթացքում թղթային կամ էլեկտրոնային (http://hti.am/main.php?lang=1&page_id=719) եղանակով ՀՀ Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունն պետք է ներկայացնի հետևյալ փաստաթղթերը`

1. Դիմում-հայտ
2. Հավաստագիր ստանալու դիմում
3. Գործունեության տեսակների վերաբերյալ հայտարարություն
4. Հայտարարություն իրավաբանական անձի իրավական կարգավիճակի մասին
5. Տեղեկանք աշխատողների թվի, պաշտոնների անվանումների և աշխատողների անունների, ազգանունների մասին
6. Տեղեկանք կանոնադրական կապիտալում մասնակցության մասին
7. Հայտարարություն հավաստագրվող անձի կանոնադրական կապիտալում օրենքով սահմանված անուղղակի մասնակցության մասին

Դիմում-հայտերը էլեկտրոնային ներկայացման դեպքում անհրաժեշտ է իրականացնել հետևյալ քայլերը՝

1. Ներբեռնել դիմում-հայտերի ձևաթղթերը
2. Լրացնել դիմում-հայտը
3. Լրացված փաստաթղթերը վերափոխել PDF ձևաչափի
4. PDF ձևաչափով դիմում-հայտերը ստորագրել էլեկտրոնային ստորագրությամբ
5. Ներկայացնել դիմում-հայտերը info@mtcit.am էլեկտրոնային հասցեին:

Պարզաբանում. Անուղղակի մասնակցություն է համարվում իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում այնպիսի մասնակցությունը, որի դեպքում՝

ա. մասնակիցը չունի իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում մասնակցություն (բաժնետոմս, բաժնեմաս կամ փայ) կամ ունի ձայնի իրավունք չտվող մասնակցություն, սակայն այդ մասնակցությամբ ուղղակիորեն կամ անուղղակիորեն իր գործարար համբավով կամ հեղինակությամբ հնարավորություն ունի կանխորոշելու տվյալ իրավաբանական անձի կառավարման մարմինների որոշումները, Էապես ազդելու նրանց որոշումների կայացման (կիրառման) վրա կամ կանխորոշելու տվյալ իրավաբանական անձի գործունեության ուղղությունները, ոլորտները,

բ. մասնակիցը չունի իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում մասնակցություն (բաժնետոմս, բաժնեմաս կամ փայ) կամ ձայնի իրավունք չտվող մասնակցություն, սակայն հնարավորություն ունի կանխորոշելու տվյալ իրավաբանական անձի կառավարման մարմինների որոշումները, Էապես ազդելու նրանց որոշումների կայացման (կիրառման) վրա կամ կանխորոշելու տվյալ իրավաբանական անձի գործունեության ուղղությունները, ոլորտները՝ տվյալ իրավաբանական անձի նկատմամբ իր ունեցած պահանջի իրավունքի ուժով,

գ. մասնակիցն իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում մասնակցություն ունեցող իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում ունի ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 50 տոկոս և ավելի մասնակցություն,

դ. մասնակիցն իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում մասնակցություն ունեցող իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում ունի մասնակցություն և իր գործարար համբավով կամ հեղինակությամբ հնարավորություն ունի կանխորոշելու տվյալ իրավաբանական անձի կառավարման մարմինների որոշումները, Էապես ազդելու նրանց որոշումների կայացման (կիրառման) վրա կամ կանխորոշելու տվյալ իրավաբանական անձի գործունեության ուղղությունները, ոլորտները:

Դիմումի ստացման օրվանից 3 աշխատանքային օրվա ընթացքում այն ուսումնասիրվում և թերությունների հայտնաբերման դեպքում 2 աշխատանքային օրվա ընթացքում Ձեզ գրավոր տեղեկացնում են դրա մասին: Դուք կարող եք 5 աշխատանքային օրվա ընթացքում

վերացնել հայտնաբերված թերությունները և փաստաթղթերը գրավոր ներկայացնել քարտուղարություն: Ամբողջական փաթեթը հանձնելուց հետո՝ 30-օրյա ժամկետում կկայացվի հավաստագրի տրամադրման կամ մերժման մասին որոշումը: Ձեզ կտրամադրեն հավաստագիրը: Որոշման ընդունումից հետո հավաստագիրը տրամադրվում է ընկերությանը/ԱԶ-ին 5-օրյա ժամկետում:

Կարևոր. սույն դիմումով և կից փաստաթղթերով ներկայացված տեղեկությունների յուրաքանչյուր փոփոխման դեպքում դրանց մասին 20-օրյա ժամկետում անհրաժեշտ է գրավոր տեղեկացնել ՀՀ Բարձր Տեխնոլոգիական Արդյունաբերության նախարարությանը:

Ուշադրություն. Հնարավոր է դեպք, երբ դուք SS ոլորտում գործող, շրջանառության հարկ վճարող ԱԶ/ԱՊԸ եք և ցանկանում եք դիմել՝ սույն արտոնությունից օգտվելու համար: Այս պարագայում կատարելու եք շրջանառության հարկի բաժնում նշված բոլոր վճարները, միայն եկամտային հարկի գծով կիրառելու եք արդեն նվազեցված 10% դրույքաչափը:

1.4 Հարկային հաշվետվությունների ներկայացման և հարկային պարտավորությունների կատարման ժամկետներ

Անվանում

Վերջնաժամկետ

| | |
|---|---|
| <p>1. Հայտարարություն հավաստագրված անձանց ներկայացվող պահանջները բավարարելու մասին՝ ըստ N7 ձևի՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=102563</p> | <p>յուրաքանչյուր ֆինանսական տարվա նոյեմբերի 1-ից մինչև դեկտեմբերի 1-ը</p> |
| <p>2. Հավաստագրի գործողության ընթացքում ստացված արդյունքների և այլ տեղեկությունների վերաբերյալ հաշվետվություն ըստ Հավելված 6-ի. https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=102563</p> | <p>մինչև յուրաքանչյուր կիսամյակը հաջորդող ամսվա 20-ը</p> |

Հաշվետվությունը կարող է ներկայացվել Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն էլեկտրոնային տարբերակով՝ էլեկտրոնային փոստով կամ էլեկտրոնային կրիչով՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված էլեկտրոնային ստորագրության առկայության դեպքում:

Հավաստագրված SS ընկերություններն ու ԱԶները, որպես հարկային գործակալ ազատված են հարկը հաշվարկելու, պահելու և պետական բյուջե փոխանցելու պարտավորությունից,

բացառությամբ վարձու աշխատողների եկամտային հարկի, սոցիալական վճարի և ԱԱՀ հաշվետվություններից:

Վերջինս կարող էք գտնել <https://file-online.taxservice.am> համակարգի Ձեր անձնական էջի «Հաշվետվություններ» բաժնում:

Անվանում

Վերջնաժամկետ

| | |
|---|---|
| 189. Եկամտային հարկի հաշվարկ՝ ներգրավված վարձու աշխատողների համար | Մինչև յուրաքանչյուր հաշվետու ամսվա 20-ը |
| 206. Ավելացված արժեքի հարկի և ակցիզային հարկի միասնական հաշվարկ | Մինչև յուրաքանչյուր հաշվետու ամսվա 20-ը |

Հարկային պարտավորությունների և վճարների մարումը պետք է իրականացվի հետևյալ ժամանակային գրաֆիկով.

Անվանում

Վերջնաժամկետ

Հաշվեհամար

| | | |
|--|--|---------------|
| Եկամտային հարկ | Մինչև յուրաքանչյուր հաշվետու ամսվա 20-ը | 900008000490 |
| Կենսաթոշակային կուտակային վճար վարձու աշխատողի համար | | |
| ԱԶԻ դեպքում իր գծով տարեկան կենսաթոշակային կուտակային վճար | Մինչև հարկային տարվա հաջորդող տարվա ապրիլի 20-ը | |
| ԱԱՀ վճար | Մինչև յուրաքանչյուր հաշվետու ամսվա 20-ը | |
| Վարձու աշխատող ունենալու դեպքում դրոշմանիշային վճար | Մինչև յուրաքանչյուր հաշվետու ամսվա 20-ը | 9000050011186 |
| | Մինչև հարկային տարվա հաջորդող տարվա փետրվարի 1-ը | |

| | | |
|--|--|--|
| ԱԶ լինելու դեպքում նաև տարեկան 12.000 դրամ դրոշմանիշային վճար: | | |
|--|--|--|

Ուշադրություն. Եթե SS ոլորտում գործող, շրջանառության հարկ վճարող ԱԶ/ԱՊԸ եք , որը ստացել է SS ոլորտում գործող ընկերությունների համար արտոնություն, ապա անհրաժեշտ է ներկայացնել շրջանառության հարկ վճարողի բոլոր հաշվետվությունները՝ ըստ համապատասխան ժամանակացույցի, ինչպես նաև սույն բաժնում նշված առաջին երկու հաշվետվությունները էլեկտրոնային տարբերակով՝ էլեկտրոնային փոստով կամ էլեկտրոնային կրիչով, հանձնել Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն: